

## **Հողաշինություն և հողօգտագործում**

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 190340.8 հա, այդ թվում վարելահող՝ 16199.5 հա, բազմամյա տնկարքեր՝ 1361.6 հա, խոտհարքեր՝ 5014.4 հա, արոտ՝ 92326.3 հա, այլ հողատեսքեր 75438.4հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 24 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու առաջարկություններ, որից՝ 17-ին միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն: Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի մասնագետների և 2 համայնքի ղեկավարների հետ աշխատանքներ ենք իրականացրել համայնքների վարչական սահմանների սահմանանիշերի ամրացման և 44 համայնքների անձնագրերի կազման ու հանձնման գործընթացին:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 10 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել, իսկ Ջերմուկի և Գնդեվազի համայնքներում ըստ անհրաժեշտության՝ տեսչական ստուգումներ է կատարվել, որտեղ հայտնաբերվել է հողամասերի ոչ նպատակային նշանակության օգտագործում՝ աշխատանքներ կանխվել են իսկ համայնքի ղեկավարների նկատմամբ ՀՀ վարչական իրավախախտումների

վերաբերյալ>> օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն կիրառվել է վարչական տուգանք:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ Գլածոր և Սերս համայնքներում կատարել ենք համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ բարձրաժեքից - ցածրաժեքի:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 24.19 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 16049296.84 դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Տարի	Վարձակալվող հողատարածք հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ. դրամ	Գանձվել է հազ. դրամ	Տոկոս
2012	7130	1302	72703.4	74246.8	102.1
2013	7354.0	1343	75097.8	79808.3	106.2

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- վարելահողերի 78 % -ը անջրդի են,
- հողերի բնական ցածր բերրիություն,
- բնակավայրերից հեռու գտնվելը: